ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի

2014 ***թվականի հոկտեմբերի*** *24-****ի թիվ*** *3* ***որոշմամբ և հրապարակվում է***
*«****Գնումների մասին****» ****ՀՀ օրենքի*** *24-****րդ հոդվածի համաձայն***
Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ԵՔ-ՊԸԱՇՁԲ *14/91*

Պատվիրատուն՝ Երևանի քաղաքապետարանը, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Արգիշտիի փող. 1 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի վարչական շրջանների բակային տարածքներում մինի ֆուտբոլի դաշտերի կառուցման *նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):*
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլորը, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

*Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ 10-րդ օրը ժամը 15:00-ը: Ընդ որում փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն /2550.0 ՀՀ դրամը վճարված լինելը հավաստող՝ բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ներկայացնելու դեպքում/ այդպիսի պահանջ ստանալու օրը: /*Վճարումն անհրաժեշտ է իրականացնել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Երևանի քաղաքապետարանի «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի 247010087184 հաշվեհամարին/:*

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի փող. 1, 321 սենյակ հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 15:00-ն և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն հրավերի 1-ին մասի 12-րդ բաժնով սահմանված կարգով:

Մասնակիցների որակավորման փվյալների՝ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Վ. Մեժունցին :

Հեռախոս՝ 514 194:

Էլ.փոստ՝ vachagan.mejunc@yerevan.am

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝----------:

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան:

Հաստատված է
«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի
2014թ. «հոկտեմբերի» «24»-ի թիվ «2» որոշմամբ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հ Ր Ա Վ Ե Ր

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի վարչական շրջանների բակային տարածքներում մինի ֆուտբոլի դաշտերի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված պարզեցված ընթացակարգի

Հարգելի մասնակից

ա. մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման.

բ. գնման առարկան զննել վերջինիս գտնվելու վայրում, ձեռք բերել անհրաժեշտ տեղեկություններ, որոնք վերաբերում են հայտի նախապատրաստմանը և պայմանագրի կնքմանը _/սահմանվում է, եթե պատվիրատուի կողմից ձեռք են բերվում շինարարական աշխատանքներ /:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևան քաղաքի վարչական շրջանների բակային տարածքներում մինի ֆուտբոլի դաշտերի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված սույն պարզեցված ընթացակարգի հրավերի

ՄԱՍ I.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
6. Հայտի ապահովումը
7. Հայտերի բացումը
8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Պայմանագրի ապահովումը
11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

ՄԱՍ II. ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի կազմմանը ներկայացվող պահանջները
4. Հայտի գնային առաջարկը
5. Հայտը պատրաստելու կարգը
6. Հավելվածներ
7. Ցանկ մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն «Երևանի քաղաքապետարանի (այսուհետև՝ Պատվիրատու)՝ կարիքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով, «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով անցկացվող պարզեցված ընթացակարգի (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ նաև Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Երևանի քաղաքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ e-mail: vachagan.mejunc@yerevan.am

ՄԱՍ I

1. Գնման առարկայի բնութագիրը

Գնման առարկա է հանդիսանում Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևան քաղաքի վարչական շրջանների բակային տարածքներում մինի ֆուտբոլի դաշտերի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերումը՝

N	Աշխատանքների անվանումը
	Երևան քաղաքի վարչական շրջանների բակային տարածքներում մինի ֆուտբոլի դաշտերի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ
1	*Մարգարյան 1-ին նրբ. հ.138 դպրոցին հարակից*
2	*Խաչատրյան 29, 31, 33 շենքերի բակ*
3	*Բաբայան 36 շենքի բակ*
4	*Աճառյան փողոց՝ հ.30 և հ.2 շենքերի բակ*
5	*Ռուբինյանց 27/4ա շենքի բակ*
6	*Դավթաշեն 2-րդ թաղ. հ.հ.3, 4 ա,բ և հ.3 շենքերի բակ*
7	*Արցախի 8/4 շենքի դիմաց*
8	*Ավանեսովի անցուղի հ.2 շենքի դիմաց*
9	*Երվ. Քոչար 15 շենքի հարակից տարածք*
10	*Օտյան փողոց հ.105 դպրոցին հարակից*
11	*Մալաթիացիների պուրակի տարածք*
12	*Մոլդովական հ.6/1 շենքի հարևանությամբ*
13	*7-րդ զանգվածի հրաձիգարանի հարևանությամբ*
14	*Այգեգործական փողոցում*
15	*11-րդ փողոցի հ.14 շենքի հարևանությամբ*
16	*Եղբայրության 22 շենքի բակ*
17	*Աէրացիայի հ.հ.2/10, 1/1ա և 2/1ա շենքերի բակ*
18	*Լեփսուսի 41 շենքի բակ*

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը

2.1 Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե մասնակիցը հայտով ներկայացրել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,

2) բացի հայտարարությունից, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

2.2 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝

1) որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ,

2) որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Եթե մասնակիցը հայտով ներկայացրել է սույն հրավերի II մասի 2.2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:

2.3 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,

2) մասնագիտական փորձառություն,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում մասնակցի՝

- «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1)Մասնակիցը հայտով ներկայացնում է հետևյալ տեղեկությունները.

Նախկինում կատարված պայմանագրերի		
Առարկան	Ծավալը՝ Գումարային արտահայտությամբ (դրամ)	պատվիրատուի անվանումը և նրա հետ կապ հաստատելու տվյալները
1	2	3
Տարեթիվ՝ ..... թվական		
1.		
2.		
....		
Տարեթիվ՝ ..... թվական		
Տարեթիվ՝ ..... թվական		
....		

2) մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն (հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվան և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող բոլոր տեսակի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր:

Նմանատիպ են համարվում բոլոր տեսակի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարումը:

- «**Մասնագիտական փորձառություն**» **չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝**

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

2. նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3)Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն մասով նախատեսված պահանջները:

- «**Աշխատանքային ռեսուրսներ**» **չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝**

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.3) պայմանագրի կատարման համար սույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին՝ կցելով պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

Ընդ որում աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն մասով նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար աշխատակազմում պետք է ընդգրկված լինեն առնվազն 1 հոգուց բաղկացած ինժեներատեխնիկական անձնակազմ առնվազն 3 տարի մասնագիտական աշխատանքային փորձով:

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

3. **Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը**

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած Մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

3.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից: Այդ դեպքում Մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման գործողության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում:

3.6 Սույն բաժնի համաձայն կատարվող գործողությունների և դրանց արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

4. **Հայտը ներկայացնելու կարգը**

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի հայտ:

Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

Ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:Ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ Պարզեցված ընթացակարգի հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվելու պահից հաշված «10-րդ» օրվա ժամը «15:00»-ն, «Երևանի քաղաքապետարանի վարչական շենք, Արգիշտի 1, 321 սենյակ» հասցեով: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Վ. Մեժունցը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

4.3 Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. սույն հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը /ներառյալ որակավորման չափանիշները հավաստող սույն հրավերով պահանջվող փաստաթղթերը /,

բ. գնային առաջարկ,

գ. հայտի ապահովում,

դ.* ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ) առաջարկներ գնման առարկայի տեխնիկական հատկանիշների վերաբերյալ (ծավալաթերթ-նախահաշիվ)

ե. էլեկտրոնային փոստի հասցեն,

զ. հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

է. էլեկտրոնային փոստի հասցեն,

ը. հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

5. **Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը**

5.1 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Փաստաթղթային ձևով հայտ ներկայացնելու դեպքում հայտի փոփոխման մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի՝ «Պարզեցված ընթացակարգի հայտը պատրաստելու» հրահանգի 5.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև հայտերի բացելը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

6. **Հայտի ապահովումը**

6.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից:

Հայտի ապահովումը ներկայացվում է Մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի *N 7 հավելվածով*:

6.2 Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված Մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

6.3 Հայտի ապահովման գործողության ժամկետը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

7. **Հայտերի բացումը**

7.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ սույն ընթացակարգի հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու պահից հաշված 10-րդ օրվա ժամը «15:00»-ին, «Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 321 աշխատասենյակ» հասցեում:

7.2 Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում են հայտ ներկայացրած յուրաքանչյուր Մասնակցի անվանումը (անունը), տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ սույն հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ, տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում սույն հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ, տեղեկություններ՝ յուրաքանչյուր Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին, յուրաքանչյուր Մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված, տեղեկություններ՝ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին:

*<u>*եթե նախատեսվում է սույն հրավերով</u>*

7.2.1 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն կետում նշված արձանագրությանը:

7.2.2 Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում հայտերի և դրանց գնահատման թերթիկների երկուական օրինակները փոխանցում է հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ՝

1) գնահատում է ներկայացված հայտերը.

2) գնահատման արդյունքներն արտացոլում է գնահատման թերթիկում:

7.2.3 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

7.2.4 Առաջին և հաջորդաբար և տեղերը զբաղեցրած մասնակիցները որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝ գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 4.3 կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

7.2.5 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ տվյալ օրվա Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով:

7.2.6 Հանձնաժողովի, Պատվիրատուի և Մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը.

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

7.2.7 Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում՝ կամ եթե հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

1)առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր Մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները).

2) հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր Մասնակիցներին էլեկտրոնային ձևով

միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

3) բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը.

4) յուրաքանչյուր Մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար, նախատեսված վերջնաժամկետի ավարտը Մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը.

5) բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ Մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսնված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցները :

6) բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, և պայմանագիր չի կնքվում:

7.3 Գնումները համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է հանձնաժողովի անդամների ներկայացրած գնահատման թերթիկները և կազմում հայտերի գնահատման արձանագրություն, որն ստորագրում են հանձնաժողովի անդամները:

7.4. Պայմանագրերը կարող են իրականացվել գործակալության կամ ենթակապալի պայմանագրեր կնքելու միջոցով:

7.4.1 Գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված Մասնակիցը: Եթե գործակալության կամ ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, *ապա՝*

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները).

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ հանդիսացող անձի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

3) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ: Պատվիրատուն իր համաձայնությունը տալու համար իրավունք ունի մասնակցից պահանջելու նոր գործակալի կամ ենթակապալառուի վերաբերյալ փաստաթղթեր՝ վերջինիս համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը ճշտելու նպատակով: Պատվիրատուի անհամաձայնության դեպքում վերջինս երկու աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է մասնակցին և գործակալի կամ ենթակապալառուի փոփոխություն չի կատարվում, կամ պայմանագիրը լուծվում է:»,

4) Մասնակիցն է պատասխանատվություն կրում գործակալի կամ ենթակապալի պարտավորությունների համար:

7.4.2 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

3) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

4) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.5 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի նիստերին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

8. **Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը**

8.1 Որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում՝ հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն արձանագրվելու (հայտնաբերվելու) դեպքում՝ գնումները համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է Մասնակցին՝ առաջարկելով երեք

աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1)շտկվելու դեպքում Մասնակցի հայտը գնահատվում է բավարար.

2) չշտկվելու դեպքում, հանձնաժողովի որոշմամբ, տվյալ Մասնակցի հայտը մերժվում է:

Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:

Ընդ որում գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվում են 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշների վերաբերյալ փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և համապատասխանության դեպքում 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցը համարվում է ընտրված մասնակից, որին էլ ներկայացվում է պայմանագիր կնքելու առաջարկ: Հակառակ դեպքում 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին սույն հրավերով սահմանված կարգով տրվում է որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն: Սահմանված ժամկետներում նշված անհամապատասխանությունները շտկվելու դեպքում մասնակցին սահմանված կարգով ներկայացվում է պայմանագիր կնքելու առաջարկ: Նշված անհամապատասխանությունները 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից չշտկվելու դեպքում գնահատող հանձնաժողովը գնահատում է 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման չափանիշների վերաբերյալ փաստաթղթերը: Գնման գործընթացը շարունակվում է նույն կարգով, և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները սահմանված կարգով չշտկվելու դեպքում ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով:

8.2. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հարվերի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

8.3 Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն հարվերի ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

8.4 Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.5 Մասնակիցը, իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Գնումների համակարգողը և (կամ) հանձնաժողովը կարող են ստուգել Մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Եթե Մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1)սույն գնման գործընթացին տվյալ Մասնակցի մասնակցությունը դադարեցվում է, այդ թվում՝ այդ Մասնակցի հետ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում կնքված բոլոր պայմանագրերը պատվիրատուների կողմից միակողմանիորեն լուծվում են.

2) Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում.

3) ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8.6. Սույն հրավերի 8.5 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.7. Պայմանագիր կնքվելու, իսկ սույն ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը հրավիրվում է արդյունքների ամփոփման նիստ, որի ընթացքում հայտարարվում են ընթացակարգի արդյունքները:

8.8 Մինչև պայմանագիր կնքելը, Պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Այդ մասին կարող է հայտարարվել՝

1) արդյունքների ամփոփման նիստում՝ հանրային իրազեկման միջոցով, որին հրավիրվել են գնումների գործընթացի բոլոր Մասնակիցները.

2) նման հայտարարությունը էլեկտրոնային ձևով կամ ֆաքսով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կարող է ուղարկվել գնումների գործընթացի բոլոր Մասնակիցներին.

3) նման հայտարարությունը տեղադրվում է լիազորված մարմնի, իսկ հնարավորության դեպքում՝ նաև Պատվիրատուի ինտերնետային կայքում:

8.9 Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և Պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում** «5» **օրացուցային օր է**: **Անգործության ժամկետը կիրառելի չէ**, **եթե հայտ է ներկայացրել միայն մեկ Մասնակից**, **որի հետ կնքվում է պայմանագիր:*

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ Մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առոչինչ է:

8.10 Ամփոփման նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.11 Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը ամփոփման նիստի վերաբերյալ ցանկանում է արտահայտել ամփոփման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն մասի 8.10 կետում նշված արձանագրությանը:

9. **Պայմանագրի կնքումը**

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ Պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2 Ընտրված Մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջը:

9.3 Եթե ընտրված Մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն հրավերի 8.9 կետով նախատեսված անգործության ժամկետի ավարտից 5 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և սույն հրավերի 10.1 կետով նախատեսված ժամկետում Պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի, **իսկ պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե նա հայտարարվել է ընտրված Մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

9.4 Մինչև սույն հրավերի 9.3 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

10. **Պայմանագրի ապահովումը**

10.1 Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ օրացուցային օրվա ընթացքում, ընտրված Մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված Մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

10.2 Պայմանագրի կատարման ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի տասը տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված Մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով(Հավելված N 8):

*** *եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար*

10.3 ***Պայմանագրով Պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված Մասնակիցը նախապես Պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, երաշխիքի ձևով(օրինակելի ձևը ըստ Հավելված N 9-ի): Կանխավճարի մարման կարգը սահմանած է պայմանագրի նախագծով:

10.4 Եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, ապա պայմանագրի և (կամ) կանխավճարի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին պայմանագրի կատարման ավարտից հետո ոչ ուշ, քան հինգ օրացուցային օրվա ընթացքում:

11. **Ընթացակարգը չկայացած հայտարարելը**

11.1 Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

11.2. Ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են Մասնակիցներին:

11.3 Տեղեկագրում հրապարակելու նպատակով, գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում, Պատվիրատուն լիազորված մարմին է ներկայացնում հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

12. **Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը**

12.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

12.1.1 Յուրաքանչյուր անձ, ով գտնում է, որ պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի գործողությունների հետևանքով խախտվել են իր իրավունքները, կամ կրել է, կամ կարող է կրել վնասներ, իրավունք ունի ահազանգելու գնումների աջակցման կենտրոնի թեժ գծին:

12.1.2 Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման վերաբերյալ գնումների աջակցման կենտրոնի թեժ գծին ահազանգ ստանալու դեպքում՝

1) գնումների աջակցման կենտրոնն ստացված ահազանգի վերաբերյալ կազմում է արձանագրություն, եթե առկա են հետևյալ տեղեկությունները՝

ա. պատվիրատուի անվանումը,

բ. գնման ընթացակարգի ծածկագիրը և (կամ) առարկան,

գ. գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման առարկան:

Արձանագրությունը ներառում է նաև ահազանգողի անունը (անվանումը), եթե այն հայտնի է.

2) գնումների աջակցման կենտրոնի պետի հանձնարարականով գնումների աջակցման կենտրոնի համապատասխան ստորաբաժանման ղեկավարը կամ գնումների աջակցման կենտրոնի պետի կողմից լիազորված գնումների աջակցման կենտրոնի այլ պաշտոնատար անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հեռախոսակապ է հաստատում տվյալ ընթացակարգի գնումների համակարգողի, իսկ անհնարինության դեպքում՝ պատվիրատուի ղեկավարի և (կամ) աշխատակազմի ղեկավարի հետ և վերջինիս տեղեկացնում է ստացված ահազանգի վերաբերյալ: Գնումների աջակցման կենտրոնն ստացված ահազանգի վերաբերյալ ծանուցում է նաև էլեկտրոնային փոստով՝ պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային հասցեի առկայության դեպքում.

3) պատվիրատուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնումների աջակցման կենտրոնին է տրամադրում ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև ստացված ահազանգի վերաբերյալ պատվիրատուի գրավոր կարծիքը.

4) եթե պատվիրատուի կողմից ընդունվում է կատարված խախտումը, և պատվիրատուն համաձայնում է անմիջապես վերացնել արձանագրված խախտումը, ապա արձանագրված խախտման և դրա վերացման մասին տեղեկատվությունը պատվիրատուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների աջակցման կենտրոնին.

5) եթե պատվիրատուն գտնում է, որ ահազանգված խախտումն առկա չէ,

ապա՝

ա. մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն գնումների աջակցման կենտրոն է ներկայացնում հավաստում խախտման բացակայության մասին, ինչպես նաև՝ տվյալ գնման ընթացակարգին վերաբերող բոլոր փաստաթղթերը.

բ. պահանջվող տեղեկատվությունն ստանալուց հետո գնումների աջակցման կենտրոնում հրավիրվում է քննարկում, որին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ կողմերը.

գ. հրավիրված քննարկման վերաբերյալ կազմվում է արձանագրություն.

դ. քննարկման արդյունքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում արձանագրվելու դեպքում, գնումների աջակցման կենտրոնի պետի հանձնարարականով, գնումների աջակցման կենտրոնը բողոքարկման գործընթաց է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում.

ե. գնումների աջակցման կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացվում է գրավոր՝ գնումների աջակցման կենտրոնի պետի կողմից, որում ներառվում են պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը, բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան, գնումների աջակցման կենտրոնի կողմից արձանագրված խախտման առարկան և պահանջը, ահազանգող անձի պահանջը (եթե

նման պահանջ առկա է), բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները, այլ անհրաժեշտ տեղեկություններ.

6) գնումների աջակցման կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքը քննվում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով:

12.2 Գնումների, այդ թվում բողոքարկումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանարապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

12.3 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու Պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին՝ դիմում ներկայացնելով՝ <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ին աշխատանքային օրերին և ժամերին, ք. Երևան, Կոմիտասի 54/բ, 115 սենյակ հասցեով,

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, Պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները:

12.4 Խորհրդին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անունը (անվանումը) և հասցեն.

2) Պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը, ընդ որում՝ բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար դրամ, որը պետք է փոխանցվի <<ՀայէկոնոմԲանկի Արաբկիրի>> մ/ճ, Հ/Հ 163058100971 <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հաշվեհամարին: Լիազոր մարմնի և գնումների աջակցման կենտրոնի կողմից գնումների բողոքարկման խորհրդում բողոքարկման գործընթաց նախաձեռնվելու դեպքում բողոքարկման համար վճար չի կատարվում.

7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

12.5 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն սույն մասի 8.9 կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

12.6 Եթե բողոքը չի բավարարում Օրենքի 48-րդ հոդվածի պահանջներին, ապա գնումների աջակցման կենտրոնը խորհրդի անունից այդ մասին տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու հնգօրյա ժամկետ:

12.7 Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, Պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա գտնվելու խորհրդի նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

12.7.1 Բողոքի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացներում գնումների բողոքարկման խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ներկայացուցիչը:

12.8 Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան քսան օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

12.9 Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում գնումների ընթացակարգը կամ Պատվիրատուի, հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ.

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում Պատվիրատուի կամ հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում սույն մասի 8.9 կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը.

3) չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը՝

ա. եթե Պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց Օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու,

բ. Օրենքի 9-րդ հոդվածի կամ սույն մասի 12.17 կետի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա.

4) եթե, սույն մասի 12.6 կետի պահանջներին հակառակ, հանձնաժողովը բոլոր համապատասխան փաստերը քննելուց հետո գտնում է, որ ընդհանուր գերակա շահերը պահանջում են ուժի մեջ թողնել պայմանագիրը, ապա կիրառում է այլընտրանքային պատժամիջոցներ՝

ա. պայմանագրի կատարման սահմանափակումը՝ դրա կատարման ժամկետը կրճատելու միջոցով, և (կամ)

բ. Պատվիրատուի հանդեպ պայմանագրի գնի առավելագույնը 10 տոկոսի չափով տուժանքի կիրառում.

5) բոլոր այն դեպքերում, երբ սույն մասի 3-րդ ենթակետով նախատեսված չեղյալ հայտարարելու պատժամիջոցը չի կարող ունենալ հետադարձ ուժ (քանի որ անհնար է վերացնել կատարված պայմանագրային պարտավորությունները), հանձնաժողովը, ի հավելումն, կիրառում է սույն մասի կետի 4-րդ ենթակետի <<ա>> մասով նախատեսված պատժամիջոցը.

6) հայտարարելու Պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար.

7) որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

12.10 Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքը բավարարվելու դեպքում Պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

12.11 Բողոքի բանավոր քննությունը բաց է հանրության համար և բողոքը ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

12.12 Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Օրենքի 48-րդ հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

12.13 Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն այն կայացնելու օրվանից՝ 5 օրացուցային օրվա ընթացքում, հրապարակվում է տեղեկագրում և ուղարկվում է Պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին:

12.14 Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել Պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կատարած խախտման հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

12.15 Խորհուրդը կայացնում է բողոքը ներկայացրած անձի պահանջած ժամանակավոր միջոցը կիրառելու մասին որոշում, եթե նման միջոցը պատշաճ և անհրաժեշտ է ակնկալվող վնասը մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը կանխելու համար:

12.16 Խորհուրդը հաշվի է առնում ժամանակավոր միջոցի հնարավոր հետևանքները բոլոր այն շահերի, այդ թվում հանրային շահի համար, որոնք կրելու են վնասներ, և կարող է կայացնել նման միջոց չկիրառելու մասին որոշում, եթե դրա բացասական հետևանքները կարող են գերազանցել օգուտը: Ժամանակավոր միջոց չկիրառելու մասին որոշումը չի կարող ազդել նման միջոցի դիմած անձի որևէ այլ հայցի վրա:

12.17 Բողոքը ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, սակայն մինչև խորհրդի կողմից սույն հրավերի 12.15-րդ կամ 12.16-րդ կետերով նախատեսված որոշման ընդունումը Պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու:

ՄԱՍ II
ՀՐԱՀԱՆԳ
ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

1. **Ընդհանուր դրույթներ**

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայտերը (ներառվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ սույն հրահանգի 3.2 կետում նշված դեպքերի) պետք է կազմված լինեն հայերեն:

2. **Ընթացակարգի հայտը**

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել հայտ:

Հայտը սույն հրավերով նախատեսված կարգով սույն ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և Պատվիրատուին ներկայացված գնման առարկայի վերաբերյալ առաջարկն է, որը ներկայացվում է ընթացակարգին մասնակցելու դիմումով՝ (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն:

2.2 Մասնակիցները հայտով ներկայացնում են՝

2.2.1 «Մասնակցության իրավունքը» չափանիշի՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության, մասին հայտարարություն իր իսկ կողմից հաստատված՝ ստորագրված և կնքված այն մասին, որ Մասնակիցը՝

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) ներառված չի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

5) չունի գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

Նշված հայտարարության առաջարկվող ձևը և դրա նկատմամբ առաջադրվող պահանջները ներկայացված են սույն հրավերի N 2 հավելվածում:

Եթե մասնակիցը հայտով ներկայացրել է սույն հրավերի 2.2.1 կետով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին: Բացի հայտարարությունից, 2.2.1 կետով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապացուցվել է մասնակցի՝ գնումների գործընթացում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման դրսևորման փաստը, ապա տվյալ մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.2.2 Հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իրենց համապատասխանության մասին իր իսկ կողմից հաստատված՝ ստորագրված և կնքված հայտարարություն (Հավելված N 3), որ ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,

2) մասնագիտական փորձառություն,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ

և պարտավորվում է սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները),

2.2.3 Հավելված N 3.1-ով պահանջվող տեղեկությունները և հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվան և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով

իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման աշխատանքների կատարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր:

Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են սույն հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը հետևյալն է բոլոր տեսակի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքները:

Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

2.2.4 Հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին (Հավելված N 3.2), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր (կամ պայմանագրեր)՝ կցելով նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կողմերի հաստատած՝ պայմանագրի (կամ պայմանագրերի) կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այն) պատճենը կամ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: Ընդ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայթությամբ պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակներում կատարվող գնումների ծավալի ոչ պակաս, քան հիսուն տոկոսից:

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

2.2.5 Հայտարարություն (Հավելված N 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին, տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին (Հավելված N 5.1): Ընդ որում աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները: Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

2.2.6 գնային առաջարկ, որը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում (Հավելված N 4),

2.2.7. հայտի ապահովում՝ տուժանքի ձևով (Հավելված N 7),

2.2.8 ոչ գնային առաջարկ (տեխնիկական առաջարկ)՝ առաջարկներ գնման առարկայի տեխնիկական հատկանիշների վերաբերյալ (ծավալաթերթ-նախահաշիվ) (հավելված 4.1) և ընդհանուր աշխատանքների ու աշխատանքների առանձին տեսակների իրականացման ժամանակացույց (հավելված 4.2): Ցանկալի է հայտում ներառել ծավալաթերթ-նախահաշվի էլեկտրոնային տարբերակը՝ կազմված համակարգչային էքսել (EXCEL) ծրագրով՝ էլեկտրոնային կրիչով:

2.2.9 Պայմանագրերը գործակալության կամ ենթակապալի պայմանագրեր կնքելու միջոցով իրականացվելու դեպքում, անհրաժեշտ է հայտով ներկայացնել սույն հրավերի 1-ին մասի 7.4.1 և 7.4.2 կետերով սահմանված փաստաթղթերը:

3. **Մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի կազմմանը ներկայացվող պահանջները**

3.1 Հայտում ներառված բոլոր կնքված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կնքողի կողմից:

3.2 Հայտում ներառվող՝ դիպլոմների պատճենները, տրանսպորտային միջոցների, տեխնիկական միջոցների, սարքերի, սարքավորումների վերաբերյալ փաստաթղթերը, որոնք տրամադրվել են խորհրդային ժամանակաշրջանում կամ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից, կարող են կազմված լինել ռուսերեն լեզվով, եթե դրանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուժը կորցրած չեն ճանաչվել (համարվել):

3.3 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

3.4 Սույն հրահանգի բոլոր այն փաստաթղթերը, որոնք ստորագրվում և(կամ) կնքվում են Մասնակցի կողմից, ինչպես նաև այն փաստաթղթերը, որոնք պահանջվել են ստորագրված և(կամ) կնքված լինեն տրամադրողի կողմից՝ պետք է ստորագրված և(կամ) կնքված լինեն բնօրինակով:

4. **Հայտի գնային առաջարկը**

4.1 Առաջարկվող գինը աշխատանքների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:

4.2 Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա մասնակցի ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափը: Ընդ որում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված համաձայնագրերով (պայմանագրերով) նախատեսված դեպքերի մասնակցի (մասնակիցների) գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

4.3 Գնահատող հանձնաժողովի կողմից ստուգվում են ոչ գնային պայմաններին համապատասխանող հայտերում ներառված գնային առաջարկների, իսկ շինարարական աշխատանքների դեպքում՝ նաև ծավալաթերթ-նախահաշիվների թվաբանական ճշտությունը: Թվաբանական սխալների հայտնաբերման դեպքում գնահատող հանձնաժողովը կատարում է սխալների ուղղում հետևյալ կարգով.

1) եթե առկա է անհամապատասխանություն գումարների թվային և բառային արտահայտությունների միջև, ապա հիմք է ընդունվում բառային արտահայտությունը.

2) եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի և տվյալ (առանձին) ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր քանակի սխալ բազմապատկման արդյունք է, ապա ուղղումը կատարվում է միավորի համար առաջարկված գնի պահպանմամբ՝ փոխելով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության համար առաջարկված ընդհանուր գինը.

3) եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի տասնորդական գրառման մեջ ստորակետի ոչ ճիշտ տեղում դնելու կամ սխալ կլորացման արդյունք է, ապա ճշտումը կատարվում է տվյալ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության համար առաջարկված ընդհանուր գնի պահպանմամբ՝ ճշտելով միավորի գինը.

4) գնահատող հանձնաժողովը կատարված ուղղումների արդյունքների մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին: Եթե մասնակիցը ծանուցումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով չի հայտնում իր համաձայնությունը ճշգրտված գնային առաջարկի մասին, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

5. **Հայտերը պատրաստելու կարգը**

5.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտը փաստաթղթային ձևով ներկայացնելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և 1 օրինակ պատճենից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

5.2 Սույն հրահանգի 5.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) պարզեցված ընթացակարգի ծածկագիրը.

գ) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

5.3 Սույն հրահանգի 5.1 և 5.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Հավելված 1
<<ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91>> ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

<<ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91>> ծածկագրով
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Դ Ի Մ ՈՒ Մ
Պ ա ր զ ե ց վ ա ծ ը ն թ ա ց ա կ ա ր գ ի ն մ ա ս ն ա կ ց ե լ ու

_____հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<Պատվիրատուի անվանումը>>-ի կողմից <<---ՊԸԾՁԲ---/--->> ծածկագրով հայտարարված պարզեցված ընթացակարգի ..... չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի
չափաբաժնի (չափաբաժինների) համարը
պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____ -ի էլեկտրոնայանին փոստի հասցեն է՝ <<Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե>>:
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2
«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին

_____-ն հայտնում և հավաստում է, որ.

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) «_____»-ի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

Ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4)«_____»-ն ներառված չի գնումների գործընթացին
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

Մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

5) բացակայում է գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

**6) ունի համապատասխան գործունեություն իրականացնելու համար պահանջվող լիցենզիա(ներ):*

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
ամսաթիվը, ամիսը)

Հավելված 3
«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանության մասին

_____-ն հայտնում և հավաստում է, որ.
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,
2) մասնագիտական փորձառություն,
3) տեխնիկական միջոցներ,
4) ֆինանսական միջոցներ,
5) աշխատանքային ռեսուրսներ:

_____ն պարտավորվում է «Գնումների մասին» ՀՀ
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 3.1
«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
Մասնագիտական գործունեության ՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը համապատասխանությունը մասին

Նախկինում կատարած պայմանագրերի			
N ը/կ	Առարկան	Ծավալը՝ Գումարային արտահայտությամբ (դրամ)	Պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները
1	*2*	*3*	*5*
Տարեթիվը՝.....թվական			
1.			
2.			
...			
Տարեթիվը՝.....թվական			
1.			
2.			
...			
Տարեթիվը՝.....թվական			
1.			
2.			
...			

Սույնով _____-ն հայտնում և հավաստում է, որ հայտը
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ներկայացնելու տարվան և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման աշխատանքների կատարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր:

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 3.2
«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Մասնագիտական փորձառության մասին

Սույնով _____-ն հայտնում և հավաստում է, որ
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

պարզեցված ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվան և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է_____ որի
(համանման (նմանատիպ) պայմանագրի(երի) անվանումը(ները))

Ընդհանուր արժեքը_կազմել է ---------- ՀՀ դրամ:
(թվերով և տառերով))

**Ընդ որում համանման /նմանատիպ/* պայմանագրի (կամ պայմանագրերի) *ծավալը* (կամ հանրագումարային ծավալը) գումարային արտահայտությամբ *պետք է պակաս չլինի սույն գնման ընթացակարգի շրջանակներուն կատարվող գնումների ծավալի 50 տոկոսից:*

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 3.3
«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Աշխատանքային ռեսուրսների մասին

Սույնով .....-ն հայտարարում և հավաստում է, որ
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ և այդ աշխատանքնային ռեսուրսներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 4
«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «**ԵՔ-ՊԸԱՇՁԲ**-14/91» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

Հ/Հ	Աշխատանքի անվանումը			Առաջարկված գինը /տառերով և թվերով/
		Արժեք*	ԱԱՀ-ն*	
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1				
2				
...18				

3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:
****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5
«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

º ñ¨ ³ ÝÇ ù ³ Õ ³ ù ³ å» ï ³ ñ ³ ÝÇ ³ ßË ³ ï ³ Ï ³ ½ÙÇ
· ÝáõÙÝ»ñÇ í ³ ñãáõÃáõÝ

Կից Ձեզ եմ ներկայացնում _____-ի՝ «**ԵՔ-ՊԸԱՇՁԲ**-14/91»

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը

ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը(տեղեկությունները).

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5.1
«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

պարզեցված ընթացակարգի հանձնաժողովին

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
Կնքվելիք պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին

	Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
	Անուն Ազգանունը	Որակավորումը	Աշխատանքային փորձը		Գործատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները
			Ժամանակա-հատվածը	Գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1.					
2.					
3.					
…					

Կից ներկայացնում ենք _____

(հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:)

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

ՑԱՆԿ

«ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» ծածկագրով պարզեցված ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի

N ը/կ	Փաստաթղթի անվանումը	Հրավերի համապա-տասխան հավելվածը	Նշումներ
1	Պարզեցված ընթացակարգին մասնակցելու դիմում	Հավելված 1	
2	Գործակալության կամ ենթակապալի առկայության դեպքում՝ գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները)		
3	Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում՝ համատեղ գործունեության պայմանագիր		
4	Հայտարարություն՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին	Հավելված 2	
5	Հայտարարություն՝ պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանության մասին	Հավելված 3	
5.1	Տեղեկանք՝ Մասնագիտական գործունեության համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեության մասին	Հավելված 3.1	
5.2	Հայտարարություն՝ Մասնագիտական փորձառության մասին	Հավելված 3.2	
5.3	Հայտարարություն՝ Աշխատանքային ռեսուրսների մասին	Հավելված 3.3	
6	Գնի առաջարկ	Հավելված 4	
8	Տուժանքի մասին համաձայնություն	Հավելված 7	
9	Գրություն՝ պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունքի և հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի(տեղեկությունների)	Հավելված N 5	
10.1	Կից ներկայացվող համապատասխան փաստաթղթեր		
11	Տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին	Հավելված N 5.1	
11.1	Կից ներկայացվող համապատասխան փաստաթղթեր		
12	Գործակալության կամ ենթակապալի առկայության դեպքում՝ հրավերով պահանջված համապատասխան փաստաթղթերը		
13	Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում՝ համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները		
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը՝			

_____ _____

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

*Հավելված 6**
<<ԵՔ ՊԸԱՇՁԲ-14/91>> ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ***ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91***>>

ք. Երևան <<___>> _____
20 թ.

<<_____>> , ի դեմս ---------- յանի, որը գործում է ---------- կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ----------ն, ի դեմս Ընկերության տնօրեն ----------ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի վարչական շրջանների բակային տարածքներում մինի ֆուտբոլի դաշտերի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 **Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 **Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 **Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) Նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել <Գնումների մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2)ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3)ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, մեքենա-սարքավորումներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4)Պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

/Նախատեսվում է նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների գնման դեպքում/:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Աշխատանքի կատարման ավարտից _____ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության ___ օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից _____օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է _____ (____տառերով_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1** Պայմանագրի գնից՝---------- (----------) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ

ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20 թ. դեկտեմբերի 25-ը:

*** Կիրառվում է, եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար:*

5. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծած ու փորձաքննություն իրականացրած անձինք պատվիրատուին վճարում են տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման և (կամ) դրա հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

/Նախատեսվում է նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների գնման դեպքում/:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. **ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ** (**ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ**)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. **ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1 պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ.

Պատվիրատուն իր համաձայնությունը տալու համար իրավունք ունի մասնակցից պահանջելու նոր գործակալի կամ ենթակապալառուի վերաբերյալ փաստաթղթեր՝ վերջինիս համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը ճշտելու նպատակով: Պատվիրատուի անհամաձայնության դեպքում վերջինս երկու աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է մասնակցին և գործակալի կամ ենթակապալառուի փոփոխություն չի կատարվում, կամ պայմանագիրը լուծվում է

2) Կատարողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

*** 7.5 Սույն պայմանագիրը կնքվում ընդհանուր՝_____ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Աշխատանքի մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

****Սույն կետը կարող է նախատեսվել պայմանագրի նախագծով, եթե կիրառելի է*

8. **Կողմերի հասցեները**, **բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Պ ա տ վ ի ր ա տ ու	**Կ ա տ ա ր ո ղ**
---	---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներով

Հավելված թիվ 1
« » 20 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» գնման պայմանագրի

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Երևան քաղաքի վարչական շրջանների բակային տարածքներում մինի ֆուտբոլի դաշտերի կառուցման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների

(յուրաքանչյուր չափաբաժնի համար)

Նախատեսել.

- Տիպարային մինի ֆուտբոլի դաշտի կառուցում;
- Տարածքի լուսավորության, բարեկարգման իրականացում, աղբամանների և նստարանների տեղադրում;

1. Ներկայացնել մանրամասնորեն կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալներ:
2. Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն;
3. Նախագիծը ներկայացնել 7 օրինակից;
4. Նախագիծը ներկայացնել փորձաքննությամբ;
5. Նախագծա–նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո
   նախագծերը համաձայնեցնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հետ;
6. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները;
7. Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտակա ն հատկանիշներին ներկայացվող պահանջները;
8. Նախագիծը ներկայացնել էլեկտրոնային կրիչով:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Աշխատանքների անվանումը	Աշխատանքների տևողությունը	Աշխատանքների գումարը
	Երևան քաղաքի վարչական շրջանների բակային տարածքներում մինի ֆուտբոլի դաշտերի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2014թ. նոյեմբերի 30–ը	

	Աջափնյակ		
1	Մարգարյան 1-ին նրբ. հ.138 դպրոցին հարակից		
	Արաբկիր		
2	Խաչատրյան 29, 31, 33 շենքերի բակ		
3	Բաբայան 36 շենքի բակ		
	Ավան		
4	Աճառյան փողոց՝ հ.30 և հ.2 շենքերի բակ		
5	Ռուբինյանց 27/4ա շենքի բակ		
	Դավթաշեն		
6	Դավթաշեն 2-րդ թաղ. հ.հ.3, 4 ա,բ և հ.3 շենքերի բակ		
	Էրեբունի		
7	Արցախի 8/4 շենքի դիմաց		
8	Ավանեսովի անցուղի հ.2 շենքի դիմաց		
	Կենտրոն		
9	Երվ. Քոչար 15 շենքի հարակից տարածք		
	Մալաթիա–Սեբաստիա		
10	Օտյան փողոց հ.105 դպրոցին հարակից		
11	Մալաթիացիների պուրակի տարածք		
	Նոր Նորք		
12	Մոլդովական հ.6/1 շենքի հարևանությամբ		
13	7-րդ զանգվածի հրաձիգարանի հարևանությամբ		
	Նորք–Մարաշ		
14	Այգեգործական փողոցում		
	Նուբարաշեն		
15	11-րդ փողոցի հ.14 շենքի հարևանությամբ		
	Շենգավիթ		
16	Եղբայրության 22 շենքի բակ		
17	Աէրացիայի հ.հ.2/10, 1/1ա և 2/1ա շենքերի բակ		
	Քանաքեռ–Զեյթուն		
18	Լեփսուսի 41 շենքի բակ		

Պ ա տ վ ի ր ա տ ու **Կ ա տ ա ր ող**

(ստորագրություն)

Կ.Տ.

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 2
« » 2014 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում			
		հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1.	Մարգարյան 1-ին նրբ. հ.138 դպրոցին հարակից	.....	100%	100%	100%
2	Խաչատրյան 29, 31, 33 շենքերի բակ	.....	100%	100%	100%
3	Բաբայան 36 շենքի բակ	.....	100%	100%	100%
4	Աճառյան փողոց՝ հ.30 և հ.2 շենքերի բակ	.....	100%	100%	100%
5	Ռուբինյանց 27/4ա շենքի բակ	.....	100%	100%	100%
6	Դավթաշեն 2-րդ թաղ. հ.հ.3, 4 ա,բ և հ.3 շենքերի բակ	.....	100%	100%	100%
7	Արցախի 8/4 շենքի դիմաց	.....	100%	100%	100%
8	Ավանեսովի անցուղի հ.2 շենքի դիմաց	.....	100%	100%	100%
9	Երվ. Քոչար 15 շենքի հարակից տարածք	.....	100%	100%	100%
10	Օտյան փողոց հ.105 դպրոցին հարակից	.....	100%	100%	100%
11	Մալաթիացիների պուրակի տարածք	.....	100%	100%	100%
12	Մոլդովական հ.6/1 շենքի հարևանությամբ	.....	100%	100%	100%
13	7-րդ զանգվածի հրածիգարանի հարևանությամբ	.....	100%	100%	100%
14	Այգեգործական փողոցում	.....	100%	100%	100%
15	11-րդ փողոցի հ.14 շենքի հարևանությամբ	.....	100%	100%	100%
16	Եղբայրության 22 շենքի բակ	.....	100%	100%	100%
17	Աէրացիայի հ.հ.2/10, 1/1ա և 2/1ա շենքերի բակ	.....	100%	100%	100%
18	Լեփսուսի 41 շենքի բակ	.....	100%	100%	100%
	ԸՆԴԱՄԵՆԸ	.....	100%	100%	100%

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

Պատվիրատու
<<Պատվիրատուի հասցեն>>
<<Պատվիրատուի բանկը>>
Հ/Հ ----------

(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
<<Կապալառուի հասցեն>>
<<Կապալառուի բանկը>>
Հ/Հ ----------

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 3
« » 20 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/91» գնման պայմանագրի

Կապալառու	**Պատվիրատու**
_____	_____
_____	_____
_____	_____
հասցե_____	հասցե_____
հհ_____	հհ_____
_____	_____
հվհհ_____	հվհհ_____

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N ___
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<_____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ ----------

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<_____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի համարը՝_____.

Պատվիրատուն, ի դեմս _____ և Կապալառուն՝ ի դեմս _____, հիմք ընդունելով, որ պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի (Համաձայնագրի) շրջանակներում Կապալառուն «____» _____ 2____թ.-ից «____» _____ 2____թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները

Գնման առարկայի անվանումը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար ՀՀ դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	**Աշխատանքը ընդունեց**
(ստորագրություն)	(ստորագրություն)
ազգանուն _____	ազգանուն _____
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 7
«**ԵՔ-ՊԸԱՇՁԲ**-14/91» *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ «**ԵՔ-ՊԸԱՇՁԲ**-14/91»

ք. Երևան «____»_____ 20 թ.

«Մասնակցի անվանումը»-ն, ի դեմս Ընկերության տնօրեն ----------յանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

*1. **Համաձայնության առարկան***

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է «Պատվիրատուի անվանումը» (այսուհետ՝ «Պատվիրատու») կողմից կազմակերպված՝ «Գնման առարկայի անվանում» ձեռքբերման «**ԵՔ-ՊԸԱՇՁԲ**-14/91» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետև՝ ընթացակարգ), պետք է ներկայացնի հայտի ապահովում և ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 «Պատվիրատու»-ի կողմից կազմակերպված «Գնման առարկայի անվանում» ձեռքբերման «---ՊԸԱՇՁԲ---/---» ծածկագրով ընթացակարգին Ընկերության մասնակցելուց բխող՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ---------- (---------- տառերով----------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 «Պատվիրատու»-ն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում «Պատվիրատու»-ին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը» բանկում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում պարզեցվածված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով «Մասնակցի անվանումը»-ն հանձնարարում է «Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը» բանկին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում «Պատվիրատուի նավանումը» առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

*2. **Այլ պայմաններ***

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց «Պատվիրատուի անվանումը»-ի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

«Մասնակցի անվանումը»,
«Մասնակցի հասցեն»
«Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը»
հ/հ ----------
տնօրեն -------

(ստորագրություն)
գլխ. հաշվապահ -------

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 8
«**ԵՔ-ՊԸԱՇՁԲ**-14/91» *ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N «**ԵՔ-ՊԸԱՇՁԲ**-14/91»

ք. Երևան «_____»_____20 թ.

«Մասնակցի անվանումը», ի դեմս Ընկերության տնօրեն՝ «Ընկերության տնօրենի անուն ազգանունը», որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. *Համաձայնության առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է «Պատվիրատուի անվանումը» (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «Գնման առարկայի անվանումը» ձեռքբերման «---ՊԸԱՇՁԲ---/---» ծածկագրով պարզեցված ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում և սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված «Գնման առարկայի անվանումը» ձեռքբերման N ՊԸԱՇՁԲ----/--- գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ---------- թվերով---------- (---------- տառերով----------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «Մասնակցի բանկի անվանումը» կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում պարզեցվածված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով «Մասնակցի անվանումը», հանձնարարում է «Մասնակցի բանկի անվանումը»-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում «Պատվիրատուի անվանումը» առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. *Այլ պայմաններ*

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 20 թ._____-ի -ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

«Մասնակցի անվանումը»
«Մասնակցի հասցեն»
«Մասնակցի բանկի անվանումը»
ՀՎ
ՀՎՀՀ

տնօրեն՝ ----------
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ ----------
(ստորագրություն)

Կ.Տ